



## ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՍՈՒՐԵՆ ՔՈՂԱՆՉՅԱՆ

### ԲՈՒԽԱՐԵՍԻ ՀԱՅՈՑ ԱՆՁՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ<sup>1)</sup>

Այս առթիվ ավելացնենք, որ Հ. Դ. Ալիշանը կամ Մարտին անոն հայոց եպիսկոպոս մը կ'էի 1343-ին, վերոհիշյալ Տևաշի մեջ<sup>2)</sup>: Իր ճարտարապետական ազգեցությունն էր նաև պատճառներեն գիխավորը, որ բազմաթիվ ուրմանացի և այլազգի գիտնականներուն կարծել պիտի տար, թե այս հուշարձանը կառուցող մ'Մեշտեր Մանուկն հայ մըն էր, եկած Հայաստանեն: Ու այդ ճարտարապետին անվան շուրջ հյուսված առասպելն էր, որ հայ ճարտարապետության մեծագույն մասնագետ Թորոս Թորամանյան, իր մեկ հողվածին մեջ հավանական պիտի գտներ, թե Հայաստանեն նմանօրինակ ավանդության մը մեկ վարիանտն էր, որ տարեր էին իրենց հետ Ռումանիոյ Արճեցը հիմնող հայ գաղթականները, ու մեծանուն ճարտարապետը Հարց էր տվեր, թե «Արդյոք Հայաստանի, մասնավորապես Վասպուրականի մեջ համբավ ու հոչակ ունեցող Մանվելը չէ՝ Ռումանիոյ Արճեցի ավանդության պատմած Մանուլը»<sup>3)</sup>:

Տակավին անցյալ դարու առաջին կիսում, օտար կին ճանապարհորդ մը, անցնելով Արճեցեն, իր թողած նոթերուն մեջ կըսե, թե Արճեցի փարթամ առեւրականներուն մեջ կային նաև հայեր և ոռուեր: Այս առթիվ, պետք է հիշենք նաև, որ Արճեցի մոտ մինչև այսօր ալ, կտոնվին նորս, Սահատրով և Մուշտիշտ գյուղերը, որոնք հայկական ա-

1) Սկզբը՝ «Հշմիածին» ամսագրի 1949 թվի մարտ—ապրիլ համարում:

2) Հ. Դ. Ալիշան, Կամենից, Տարեգիրք Հայոց Ահաստանի և Ռումանիոյ, 1899, Վենետիկ, էջ Բ:

3) Թ. Թորամանյան, Նյութեր Հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942 թ., էջ 76—77:

նուններ են: Խնչպես նաև՝ «Արմեանուա» (հայ) և Զօֆրնէննի կողմը Սարգիս անձնանուններուն կարելի է հանդիպիլ:

Անցնելով Բուխարեստի Հայոց անցյալին, ըստ Հ. Ք. Անդրեասյանի թողած նոթերուն, արդեն իսկ 1400—1435 թվականներուն, հայ առաքելական և կաթոլիկ դավանանքներուն պատկանող բազմաթիվ հայեր կտոնվեին բուխարեստի մեջ<sup>1)</sup>:

Գրիգոր Գոլլավ իր մեկ աշխատության մեջ<sup>2)</sup> կըսէ՝ թե 1400—1435 թվականներուն, երբ Բուխարեստ, ընդունելով բազմաթիվ վայրեր եկող զանազան ժողովուրդներ, հիմ էր սկսել բռնել, անոնց կողքին կային նաև երկու դավանանքներու պատկանող հայեր: Վալաքիո մեջ հայոց հաստատման մասին 1506-ին գրված փաստաթուղթ մը հիշելով, Բուխարեստ քաղաքի պատմության մեծագույն պատմագիր Գ. Ի. Յոնսկու-Գիոնի կըբե: «Զմոռնանք հայերը, որ շատոնց հաստատված էին Վալաքիո զանազան քաղաքներու մեջ, կան Բուխարեստ, Տրգովիշտե և Մերմիկ քաղաքներուն մեջ<sup>3)</sup>: Անկամած, հարեւան Բուխարեստ ճամբռվ, ինչպես նաև Կ. Պոլսեն ու ի մասնավորի Արդիանուպուլսեն, ուր ծաղկած գաղութներ կային արդեն, հայերուորոշ թիվ մը ժե. դարուն, եթե ոչ ավելի ալ կանուխ, գաղթած պետք է ըլլար Վալաքիա և Բուխարեստ: Այն խնամիական կապը, որ մնաց Վալաքիո և ի մասնավորի, Բուխարեստ քաղաքի հայոց և հարեւան վերոհիշյալ երկիրներու հայության միջն, լա-

1) „Aurora”, 1903, № 10, Bucuresti, p. 12.

2) Gr. Gojav.-Bisericile armenie... Buc. 1912 p. 17.

3) G. I. Ionescu-Gion.-I. st. Bucurescilor. Bucuresti, 1899.

վագույն ապացույցը կարող է կազմել մեր կարծիքին; նման բուզգարահայության, Աղբիքանուաղուստ հայերը, տակավին Բյուզանդական կայսրության օրով, համայնք կկազմեին. ասոր վկա մըն է այն երկաթափր Ավելիտարանը, որ գրված է 1007 թվականին<sup>1)</sup>, և որը Վենետիկի Ս. Պաղարու վանքին մեջ էպահմի<sup>2)</sup>:

Զանազան մանրազնին պրատումներով, կարելի է վալաքիո մեջ ԺԵ.—ԺԶ. դարերուն նույնիսկ կարգ մը հայ կարեոր անձնավորությանց հանդիպիլ Այսպես, Վալաքիո Միհեայիլ իշխանին օրով (1413—1420) կհիշվի Հակոբ Արմեանով անոն հայը, որ իշխանին կողմէ պատվիրակի դեր կատարած է Հըլչովի Մոկանները Սաշերուն գեմ պաշտպանելու փորձին մեջ, Վալաքիո Ռըմնիկ քաղաքն հաշիկ անոն առևտրականին մեկ զավակը կհիշվի 1500 թվին, Ռադու Չել Մարեի մեկ փաստաթուղթին մեջ: Նույն թվին երկու առևտրականներ կհիշվին Տրգովիշտե քաղաքն, Գրիգո (Գրիգոր) և Ավետիք անուններով, որոնք, ինչպես կարելի է կարծել, իբր վկա կհիշվին առևտրական դատի մը առիթով, դարձյալ Ռադու իշխանին օրով (12 ապրիլ 1500):

ԺԶ. դարու սկիզբը, Տրգովիշտեի առաջին առևտրականներեն իբր ներածող կհիշվի Պոպա Արմեանովցը, որ հայերեն կնշանակ՝ հայ քահանա: ԺԷ. դարու սկիզբը, ճանապարհորդ մը Տրգովիշտեի մեջ մեծ թիվով փարթամ հայեր կհիշե: Վերոհիշյալ քահանայի, ինչպես նաև կարգ մը հայոց ներկայությունը այս քաղաքին մեջ, որու մասին քիչ հետո պիտի խոսինք, կարող են փաստել՝ թե հին ժամանակ Վալաքիո հայոց կեդրուններեն մին էր Տրգովիշտե քաղաքը:

ԺԶ. դարու վերջավորության, կհիշվի Բոսուղան անոն Կեսարացի հայ մը, որ Կ. Պոլսու մեջ կօգնե Վալաքիո Միհանեա իշխանին (իշխան 1577—1583 և 1585—1591) և անոր Շորենըր՝ Պետրո Շկյոպովի (կաղ) բանակցություններուն: Դարձյալ, ԺԶ. դարու վերջավորության, կհիշվի իբրև աշքառու գիտուն գործակալ Վալաքիո մի հայ Վիտեազով (Քաջն Միհայիլ) իշխանին, Պետրե Գրիգորովիլ կամ ավելի ժամանի Արմին Պետրը անվամբ հայը, որ գիվանագիտական մեծ ճամբորդություններ ալ կկատարեր, և որմէ մնացած են նաև նամակներ ու նոթեր. ան կստորագրեր իբր նախահայրերու տառերով: Աշակ-

1) Հ. Մ. Պոտուրյան, Հայ Հանրապետակ, Պուբլ. է, 1938, էջ 969:

2) Հ. Բ. Սարգսյան, Մայր յուղակ Հայերէն Զեսաւրաց Մատենագարանին Միհթարեանց ի Վենետիկ, Վենետիկ, 1914, սյում, 509:

ցելով իշխանին՝ ան հավանաբար մտածած է նաև Հայաստանի մասին, որ գրգոռության մեջ էր այդ պահուն Դանուբի վրա թրբական պարտությանց հետևանքով: Ան թողած էր նաև իր իշխանին մասին ժամանակագրություն մը, որ ներկայիս կորսված է, և որմէ ժամանակով օգտված էր Հունգարացի պատմիչ մը:

Այս բոլոր անձնավորություններու ներկայությունը ԺԵ.—ԺԶ. դարերուն Վալաքիո մեջ, իբր պարզ այցելուներ կնկատե մեծ պատմագիտ նիկորայ Յորգան<sup>1)</sup>: Սակայն, գրածյալ ինքնն է, որ 1453-ին, Կ. Պոլսու անկումնեն վերց, գաղթ մը կարձանագրե այն հայերում, որոնք հաստատվեր էին Փերայի մեջ և ուրկե կմիկնեին հաստատվելու համար Դանուբի մոտ գտնվող ինքնավար երկիրներուն մեջ՝ միանալով այնուհետ ապրող իրենց եղբայրներուն<sup>2)</sup>: Ուրեմն, այս հիշատակության մեջ գործածված «Դանուբի մոտ երկիրներ» բառերը կարելի է նախ հասկնալ Վալաքիան և հետո՝ Մոլդավիան, որ ավելի հյուսիս է: Ուրեմն, այս գաղթը մեզ պաշտոնական կերպով ծանոթ առաջին կարավանն է դեպի Վալաքիա եկող: Հայագետ պրոֆ. Վլադ Բընըց ցեանու ևս կհաստատե Փերային դեպի Վալաքիա կատարածված այս գաղթը, ու կավելցնե, բսելով թե՝ այդ գաղթողները, յուրացուցած ըլլալով՝ Բյուզանդիոնի սովորությունները, չունեին երեք Մոլդավիա գաղթողներու հատկանիշները, որոնք մասնակցեցան երկրին քաղաքներու հիմնադրման գործին, և, առ հասառակ, բնիկ ժողովրդյան բոլոր գործունեությանց:

Ցարդ բոլորին կողմէ աննշմար մնացած, կարեռու փաստ մը կփերե Վալաքիո համար նաև Միհնադարյան տաղասաց Միհնաս սարկավագ Թոխատեցին, իր գրի առած ողբին մեջ, ուր կհիշե Մոլդավիա Ռոմանի քաղաքի մեջ հաշառուր անոն հայ քահանան, որ գաղթեր էր «Մոլմիթանաց երկրեն» (Վալաքիա): Խաչատուր քահանայի խոսքերը հետեւյալ ձևով կարձանագրե իր ողբին մեջ Միհնաս Թոխատեցին:

«... Ի Մոլմիթանաց երկրէն ելայ,  
Հաւատիս համար պանդիմտեցայ,  
Բզ հմ հասաւը ոչ ուրացայ,  
Ի յայս երկիրս բնակեցայ...<sup>3)</sup>».

Ուրեմն, մեր քիչ առաջ հիշած Տրգովիշտեի Պոպա Արմեանովեն վերջ, Միհնաս

1) N. Iorga.-Armenii si România! Oparalelă istorică (publ. Ac. Rom.) Buc. 1914. p. 65—66.

2) Նույնը, թ. 64:

3) Բուխարեստի «Հայ Մշակույթի Տան» ձեռագիրներ, թիվ 35—37, 66, 94:

Թոփատեցիի հիշած այս մեկ ուրիշ քահանան և Վալաքիո մեջ դարձալ ժօ. դարու սկզբին, մեզ կարող է ապացուցել, թե այդ շրջանին գոյություն ուներ Վալաքիո մեջ հայ կարմոր գաղթականություն մը, որ ժամանակ մը եկեղեցի ալ պետք է ունեցած ըլլար:

Հետաքրքրական է գիտնալ, որ ուսմենապատմիչները Վալաքիո մեջ 1591-ին իր երկրին իշխան կհիշեն ծագումով հայ մը: Ռադու Միտչեա «արքեցող» իշխանը վտարվելով իր ամոռուն, իր տեղը իշխան անվանմեցավ Յոն Վորք Արմեանուցի (Հովհաննես հայ իշխան) մեկ զավակի՝ Ծոեֆան անուն, և ան մուտք գործեց Բուխարեստ 1591-ի հունվարին և ավելի քան տարի մը տիրեց<sup>1)</sup>: Այս Ծոեֆան սխով» կոչված իշխանը Յոն Հայագիի մեկ զավակն էր, ծնած ազգով Սա կմոռչմե մը:

Քիչ հետո, արդեն 1593-ին Հայտնի կերպով Բուխարեստի մեջ կհիշվին կարգ մը հայեր: Բուխարեստի մեջ թրքական ջարողին միջոցին, որ 1593 նոյեմբեր 13-ին Միհայիլ Վիտեազուկի օրով տեղի ունեցավ, և երբ պաշարվեցավ գանձային տեսուչ Դանի բնակարանը Տրոգու թե Ա. Փարոը կամուրջին վրա, ուր բնակած էին թուրքերը, ջարողիով ներու մեջ քանի մը հայեր ալ կային: Ուրեմն, այդ շրջանին հայեր կային Բուխարեստի մեջ, և եթե կային այդ պահով, պետք է ըլլային նաև առաջ, Այս շրջաններուն էր, որ Բուխարեստի երկու բազմանագի պատկանող հայերը, միացած մճուր էին հարկան եկեղեցի մը կառուցել, որուն մասին պիտի խոսինք ավելի ուշ: 1598-ին նոր գաղթ մը կհիշվի Փոքր Ասիային դեպի Կարաքիա: Փոքր Ասիո մեջ երբ ձելաբներու արշավանքներուն պատճառով կավերվին ու կվողուստվին հայաբնակ շրջանները, քաղմաթիվ հայեր կտաղթեն Երզնկային, Թեմային, Ակնեն և Դիլյանիկեն և կանյանին Կ. Պոլիս, հոնկե ալ տարածվելու համար ելքուպական Թյուրքիա ու մինչև Բելգրադ, Լեռաստան, Ղրիմ և Ալալախաց (Վալաքիա) ու Պոլտանաց (Մոլդավիա) երկիր<sup>2)</sup>: 1605-ին, գաղթանականության նոր հոսանք մը ևս կուգա հաստատվի Վալաքիո մեջ, երբ Նահ Արաս, գրավել ետքը Դավիթիքը, Վանը, Նախիջևանը, Գանձակը, Ջուղան, լսելով որ Ճղարբատե Սիհան փաշան օսմանյան հսկա բանակով իր միա կոսպա, Պարտիաստան քը-

շեց իր տիրած քաղաքներեն և գլուղերեն ու մանց հայ բնակիչները, որոնց մեկ մասը հիմնեց նոր Օուղան: Նույն ժամանակ, Պարսկական բանակին անցած տեղերեն շատ հայեր գաղթեցին Կ. Պոլիս, ինչպես նաև Ռումինիա, Թափե, Կիպրոս, Լեհաստան, իտալիա<sup>3)</sup>: Այս առիթիվ կարժե հիշել, որ այս գաղթականության կապատկանի նաև Ռումանիո շատ ծանրի Պըրլիխու (ռումաներեն բույսովլիխու) գերգաստանի ծագումը, որ նախ հաստատվելով Ռումանութ, հինգ սերունդ տոկալի վերջ, այդ շառավիղներեն Հաճի Մանշուկ Ասմաթուուր (Բուգդան) Պըրլիխուն պիտի անցներ Յաջ (Մոլդավիա): Այս վերջնույն զավակի Հակիու Պըրլիխուն էր, որ պիտի դառնար Մոլդավահայոց վերածնումնի ատելդուն ու առաջարար Այս գերգաստանին որոշ ճյուղեր սերունդ սերունդ ապրեցան նաև Բուխարեստի, Բուտոչանի և Քիշնակի մեջ:

1607-ին ևս, ուրիշ գաղթականություն մը կոսպա դեպի Վալաքիա և Մոլդավիա, երբ աստիճակ սով մը կտիրի Անատոլուի ամեն կողմերը, Տիգրիսեն մինչև կասպից ծով, Կ. Պոլսեն մինչև Դավիթիք<sup>4)</sup>:

1627-ին, Մելքիսեդեկի կաթողիկոս, կեմբերգի հայ հասարակության կամքին հակառակ, կեմբերգի Հայոց եալիսկուպոս ձեռնադրեց Նիկոլ Թյորոսելիի հայը, որ դեպի կաթողիկե եկեղեցին միհաելուն համար, քաղաքային խորհրդանուցեն կապաշտպանվեր: Մելքիսեդեկի իրեն հաջորդ նշանակեց Թյորոսովից ու անոր իրավասության տակ դժուակ նաև Մոլդավիու և Վալաքիո բովանդակական հայերը: Լեմբերգի հայոց եպիսկոպոսաց տրված իրենց գործառած տիտղոսն էր: Անստուծոյ և Առաքելական Աթոռու շնորհի Արքեպիսկոպոս Հայոց կեմբերգի հաջորդ նաև Նիկոլի հաջորդ նաև Ամենայն թագաւորութիւնն և Եկացաց<sup>5)</sup>: Այս տիտղոսը գործածված կգրտնենք նիկոլ նիկոլի հաջորդ հաջորդներուն մոտ: Այս տիտղոսով, անշուշտ, փորձած են անոնք ու մինչև Երկիրներու հայերն ալ իրենց աթոռին հպատակեցնել ու կաթողիկացնել: Թայց հակառակ այս փորձերուն, ինչպես նաև այս երկիրներու մեջ շրջած կարգ մը կաթողիկե կրոնավորմերու քարոզություններուն, Մոլդա-

1) Հրանդ Աստատը, Կ. Պոլսոյ հայերը և իրենց պատրիարքները, «Ընդարձակ Տարեգոյց Ս. Փրկչեան Ազգ»: Հիւանդանոցից, 1901, Կ. Պոլիս, էջ 87.

2) Նույնը, էջ 88.

3) Lukacs C. Historia Armenorum Transilvaniae Viennae, 1859, p. 68.

1) N. Iorga. Pretendentii domnesti în sec. al XVI-lea. în Anal. Ac. Rom. Tom. XIX, Buc. 1897.

2) Գրիգոր Դարանացի, ժամանակագրութիւն, Երևան, 1915 (առաջարակին մեջ):

и пра и қаласкии հայերը միշտ համատարիմ մնացին իրենց եկեղեցվումն։ Եթե հին ժամանակ թուխարեստի և կամ Կալաքիո մեջ էշանդիպիսի հայ կաթոլիկներու, անոնք թուխանի մեջ չէ որ կաթողիկ եղան, այլ կ. Պուսեն և իրենց գաղթած վայրերեն է որ բերին տյու դաշնանանքը իրենց հնու:

1666—1670 թվականներու շրջանին, Մուղավիր և Կալաքիո մեջ կրտնենք հայ քահանա մը թաղեռու անուն, որ եկած էր Ոսկան վրդի Ամստերդամ ապագաւագիրքի վաճառքու համար, քանի որ Լեհաստանի մեջ, Պիտոսի և ուրիշներու ընդդիմության պատճառով, իրեն արգիլվեր էր այդ գիրքերը վաճառել<sup>(1)</sup>։

Հարավային Ռումանիո, այսինքն Ցարտ Ռումընեալըի մեջ (Վալաքիա և Օլտենիա) հայ ստովարաթիվ գաղութներու ներկայությունը անուղղակիորեն փաստով կարեւոր տվյալներ են նաև այդ հողամասի վրա հայ եկեղեցվու մասին գրված գրքեր:

1668-ին, Տրոֆիշտե քաղաքին մեջ, պետական եկեղեցվու սպասարկոց Ստորիցի կողմէ սլավոններենն թարգմանվեցավ գիրք մը, որ հայոց մասին որոշ տեղեկություններ կապարումակիր: Նվ դարձյալ Տրոֆիշտե քաղաքին մեջ, 1720-ին էֆսիմին Զիգապէն հույն աստվածաբանը հրատարակեց «Վարդապետական Սպառազինուղութիւն» խորագրով գիրքը, որի կիսուի նաև Հայ եկեղեցվու մասին:

Ռումանիո հարավակողմը հայոց ներկայության և տարածմածության մասին կիսաստեն նաև նույն վայրին մեջ գտնվող և Հայկական անուններ կրող գրութերը: Այսպէս են Վալաքիո Ռիմնիկու Սրբատ նահանգի «Արմեն» անուն գրութը (Կոստեշտի շրջան, վիճակ Սլորոզիա — Զառորշտի<sup>(2)</sup>), «Ծղայա Արմենիլորաց» (Հարկավան պահար անասուններու), Մարտինեշի վիճակ և Մարշինեա Բուտեսկու շրջան<sup>(3)</sup>: Օլտինիո Վըլշեա նահանդին մեջ Հիշվող «Փասկուլ» Արմենուլույ (Հայուն կատարող), Մըլայա բարձուունքին վրա<sup>(4)</sup> և այլն:

Ժ. ժ. դժ. դարերուն և շատ հայեր գաղթելով Բուլգարիո զանազան քաղաքներեն, անցան

մեծ մասամբ Ռումանիո հարավակողմը՝ Վալաքիա և Թոքրուչա գավառները, հաստատվելով Բուխարեստ, Պիտեշտ, Կոնստանցիա և այլն: Խնչվես կարելի է տեսնել անոնց թողած զանազան թղթակցություններեն և մեկ քանի ժթ. դարու առաջին կիսեն մնացած տապանագարերու արձանագրություններեն, այդ գաղղողները, մեծ մասամբ, թրքախոս էին ու իրենց գրությունները հայատառ թրթքերենով կրտեին: Ամենաալեքը 1895—1896-ի, 1908—1914-ի և, վերջապէս 1922 թվականներու թրքական շարդերու և սեղմումներու հետեւանքով: Այս վերջին գաղթերն էին, որ նոր եռանդ մը բերին հյուծող գաղութին կյանքին մեջ:

Փակելու համար այս գլուխը, պետք է ըստնք, որ բացի մեր ասկե առաջ հիշած հայ հետքեր գտնվող վայրերեն, Ռումանիո հարավակողմը, ուրիշ վայրերու մեջ ևս տակավին մինչև այսօր հայվական փոքր գաղութներու կհանդիպին: Մեր նորանոր պըրպըրուամները ցուց տվին, թե այդ վայրերեն սրոնց հայ գաղութները ևս որոշ անցյալ մը ունին և շատ սիամ կարելի է նկատել ցարդ շատերու կողմէ ընդունված այն կարծիքը, թե այդ գաղութները ծնունդ են առած ժթ. դարու վերջավորության: Վալաքիո բրլայիլանավահանգիատ քաղաքը հին հայ գաղութ մը ունեցած է: Տեղվույն հայոց եկեղեցվուրն շուրջ գտնվեցավ 1728 թվականով Անոռն անուն անձի մի տապանագարը: Բրլայիլայի հայոց նախկին եկեղեցվու համար 1792-ին, Հովհանի Արքեպիսկոպոս Արքության քահանա է օծած Ստեփանոս անուն անձ մը<sup>(1)</sup>: 1872-ին, նախկին եկեղեցվու գետնին վրա կկառուցվի ներկա եկեղեցին, Ս. Աստվածածին անվամբ<sup>(2)</sup>: Ներկայիս «Հայաստանյան Ճակատ» հայրենասիրական-մշակութային կազմակերպությունը այստեղ ևս մասնաճյուղ մը ունի:

Մոլդավիո Ֆոկշան քաղաքի Վալաքիո մասին մեջ ևս հայերը հինան հաստատված էին. ըստ Գր. Գոյլամի, Հայոց Ս. Գևորգ եկեղեցին (Վալաքիո մասին մեջ) կառուցված էր շուրջ 1600-ին<sup>(3)</sup> թվական, որ թեև ցարդ չէ ջտված, եկեղեցին որևէ արձանագրություն չունենալուն պատճառով, և սակայն, կարգ մը փաստերու հիման վրա, վերոհիշյալ եկեղեցին կարելի է ըսել թե նույն քաղաքի Մոլդավական մասին մեջ հայոց կողմէ 1780-ին կառուցված Ս. Աստվածածին եկեղեցիին պերի առաջ էր շինված՝ 1772-ին, 1732-ին

1) «Կոռմկ» (Թիֆլիս), 1863, թ. 437:

2) Պ. Ք. Մամիկոնյան, «Ռումանահայոց ներկայի և պատային, Կալաք, 1895, էջ 168:

3) Gr. Goilav.—Bisericile armenie., p. 20

2) Dictionarul statistic al României. vol. II, 1915, Buc., p. 668.

3) Dictionarul geografic al județului Râmnicu Sărat. 1895, Buc., p. 11.

4) Dictionar geografic al județului Vâlcea. 1893, Buc., p. 225,

քնված հողի մը վրա, ուր հայերը ունեին արդեն փայտաշեն եկեղեցի մը<sup>1)</sup>: Քաղաքին հայերը Վալաքիո մեջ 80—85 տարի բնակելի վերջ, անցեր են Մոլդավիո սահմանը և հոն կառուցեր են Ս. Աստվածածին եկեղեցին:

Օլտենիո Կրայովա քաղաքին մեջ ևս հայկական հետքերու կհանդիպինք: Վիեննայի Միթիմարյանց մոտ պահված ձեռագրաց մեջ կտուննք «Բառպիրք Եթեմիայի և քերականութիւն Սիմէոնի» 1728-ին գրված թիվ 91 ձեռագրից, որ 1845-են սկսյալ կիեննա կպահվի և հետևյալ հիշտատակագրությունը ունիթղ. 128 բ.— «Ես Տէր Մելքիոսի երեցս առի այս քառարան և քերական գիրքու, իմ հալալ ընչփոս Քրիստոսի թիվին Ռէծիլ-ին: Հայոց թիվին Ռէծէլ-ին (գրված է Ռէծէլ, որ է 1731 և չի համապատասխանն 1728 (Մ. թ.) թվականին. Ես սիազմամբ գրված ըլլալու է փոփ. է-ի) Հոկտեմբերին ամսոյ և օրին: Աստված քարի վայելումն տայ ամէն: (Սույն դրույ)՝ Ես կրոռակալույիի»: Հ. Տաշյան իր ծանոթադրության մեջ կըսե. ուկերժինս կարգալու է, անշոշտ, ուղղակացիութացին, ուստի գրչին տեղպէ անումն է: Կադեննք թե կրնա Հոս փոփուն Վալաքիո հին մայրաքաղաքն Krajowa (=Craiova) հասկցված ըլլալայ<sup>2)</sup>:

1804-ին տրված հրովարտակի մը մեջ, այս քաղաքը ներկող հայ առօսորականներուն համար կարգ մը օրենքներ կտեսնենք տնուրինված. ինչպես որ նույն բանը կհանդիպինք տարի մը առաջ տրված հրովարտակի մը մեջ հարևան Ռեմնիկու դե վել—Օկնա (Ռեմնիկու Վըլշեա) եկող հայ առօսորականներու մասին<sup>3)</sup>: Այս գաղութը ոչ եկեղեցի և ոչ ալ դպրոց ունի, թեև հոս ալ շուրջ 17 տարի առաջ փորձված է գեթ մանկապարտեղ մը ունենալ: Ներկայիս, «Հայաստան Ճակատ» կազմակերպությունը հոս ևս փոփր մասնաճյուղ մը ունի:

Թուխարեստի մոտ գոտնվող Պլուշտ քաղաքը ևս, ըստ մեր վերջի պրատուաններուն, տակավին անցյալ դարու սկիզբան տակարաթիվ հայ գաղութ մը ուներ 1832-ին Վալաքիո մեջ հիշված Արհեստանցական ընկերությունը մեջ եղող հայ արհեստագործերն ու առևտրականներն 10-ը հոգին կհիշվին

1) Բուխարեստի «Հայ Մշակութի Տան» ձեռագիր, թիվ 50, էջ 155:

2) Հակոբոս Տաշյան, ցուցակ հայերին ձեռագրաց մատենադարանին Միթիմարեանց ի Վիեննա, 1895, էջ 202:

3) Papu Ilarianu.—Tezaur de monumente istorice (1862—64), vol. II, p. 310, 324.

Պլուշտի մեջ<sup>1)</sup>: Տակավին այսօր ալ Պլուշտը առանց եկեղեցիի և դպրոցի փոքրիկ հայ գաղութ մը ունի, թեև հոս ևս փորձված է ժամանակ մը միություն և ընթերցարան ունենալ: Վերջերս ուրախությամբ կլսենք, որ Պլուշտի մեջ ևս ձեռնարկված է հիմնել «Հայաստանի Ճակատ» հայրենական կազմակերպության մեկ մասնաճյուղը: Վալաքիո մեջ, Արճեշի մոտ գոտնվող Պիտեշտ քաղաքին մեջ ևս Հայ փոքր գաղութ մը կա: Քաղաքին ներկա եկեղեցին կառուցված է ժմբ. դարու կիսուն: Պիտեշտի մեջ ևս արհեստական ընկերությանց անդամ կհիշվին 1832-ին 7 հայեր<sup>2)</sup>: Հին գաղթականները, գրեթե մեծ մատամբ, այսօր ծովված են: Թրքական սարսափիներու հետևանքով հոս ևս հաստատված են փոքր թիվով հայ գաղթականներ: Դարձրալ, վերջերս կլսենք, որ հոս ալ «Հայաստանյան Ճակատը» հիմնած է մասնաճյուղ մը: Փոքր թիվով հայեր կապրին նաև Վալաքիո Զյուքյուսի Տուրնու Սևերին և այլ քաղաքներու և գյուղերու մեջ: Այս առթիվ ավելցնենք, որ Զյուքյուսի մեջ հայերը 1926-ին հիմնած էին վարժարան մը, որու աշակերտության թիվը 1927 թվին բարձրացած էր մինչև 40-ի, սակայն բյուզիքի պակասեն ու ծագած անհամաձայնություններու հետևանքով, 1928-ին ան փակվեցավ:



Համնելով սույն գլխի ավարտման, պետք է ըստնք, որ, դժբախտաբար, շատեր վալաքիո հայ գաղութի գոյությունը սխալմամբ ավելի նոր շրջաններու են վերագրած:

Եզրափակիելով սույն գրավող, կկարծինք, որ մեր առաջ բերած փաստերով կարողացանք ճշտել թե ժե. դարուն, եթե ոչ անկեալ առաջ, Վալաքիո մեջ գոյությունը ուներ հայ գաղութ, որ հետագային նորանոր փաղթերով ապելի ևս պիտի զորանար: Ուրիշն, այսպիսով, կկարծենք, որ մեր փաստերը բավական են ճշտելու Վալաքիո հայ գաղութի վաղեմի գոյությունը և, այսպես, ուղելու նաև կարգ մը ամճիշտ կարծիքներ, ըստ որոնց հայոց գոյությունը Վալաքիո մեջ ցարդ շատ ավելի նոր էր նվասվեր:

1) Începuturile edilitare, 1830—1832. Buc. 1886 (Դաստան էջեր),

2) նույնը:

## ՅՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ ԹԱՂԵՐԸ

Յուխարեստ քաղաքի պատմության գիւառը պատմագիր Յոնեսկու-Զիռոն կըսէ՝ թե Ժէ դպրուն արդեն Յուխարեստի մեջ կհիշվեր Հայկական թաղը, «Մահալաւուա Արմենիասկը» անձամբ, ուր և անոնք ունեին իրենց Ակեղեցին<sup>1)</sup>: Հստ հրապարակագիր Կասելի, Հայկական թաղը (Mahalaua Armenaeasca), որ բոյերական տունիր աւ տներ, ինչպես կհիշվի թիւ հետո մեր զետեղած երգին մեջ, ուր Հայկական փողոցը կհիշատակիլ և որ մաս կիւազմեր Հայկական թաղամասին, կտարածվեր մեկ կողմէն «Մահալաւուա Օլարափ, ուր պիտի հիմնիքը հետո 1793-ին և ուր պիտի հաստատվեին Կըմպունդեն և ուրիշ վայրերն ամաններ բերող օլարները (բրուտներ կամ կավագործներ) և յուս կողմէն «Մահալաւուա պոպեի Հիերացի» (Հիերա քահանացի թաղ) և «Մահալաւուա Կայմատացի» միջև, որ դրացի էր «Պող ալ Արմենիլորախն» (Հայոց կամուրջ) և հայ եկեղեցիոց: 1772-ի փաստաթղթերը կհիշատակեն վերոհիշյալ «Պող ալ Արմենիլորաք<sup>2)</sup>», որ հետագային կստանա «Ալիցա Արմենեասկը» (Հայկական փողոց) անոնք:

Յուխարեստի ամենահետին թաղը դեպի «Տըրգուլ դե Աֆարը», Պոպա Հիերացի թաղն էր, որ այդ միջոցին քաղաքին սահմանադրության էր: Հայերը հաստատվեցան քաղաքին սահմանադրությունն անդին—ցարու շենք դիտեր ճշտիվ թե ո՞ր թվականին— և ակսան բնակարաններ շինել: Ռումանական ժողովրդական բանաստեղծության մը մեջ երգված է Հայկական փողոցը:

Ժողովրդական երգը այսպես կսկսի.

«Հայկական փողոցին վրա

Բոյերական պալատ մը կա...»:

Դիտելի է, թե ինչպես անցյալ գլուխին մեջ տեսանք, տակավին 1593-ին «Տըրգուլ դե Աֆարը» մեջ հայեր կհիշվեին և այս թաղը, ինչպես վերը ըստ, դրացի էր Հայկական թաղին, ուրեմն, ճշտիվ ժամանակական պալատը այդ անձումը բնակություն էր:

<sup>1)</sup> Ionescu-Gion - Ist. Bucurescilor. Buc., 1899., p. 230.

<sup>2)</sup> Կնշանակ հայկական կամուրջ: Հին ժամանակ, Բովարեստի փողոցներն շատերը փայտյա գերաններով աւահատակած ըլլալով, կամուրջ անունը կըրեին:

Եին հաստատեր Այս արդիթով տեղն է հիշելը թե «Տըրգուլ դե Աֆարը» թաղը այժմյան շահեա Մաշիլոր» կոչված պողոտան է, որ ներկայիս ալ հայոց կողմին ամեննեն շատ բնակած թաղն է:

Բայց սիսալ է կարծել, թե հին ժամանակ հայերը միայն վերոհիշյալ թաղամասին մեջ ապրեցան. անոնք խմբված էին ուրիշ վայրերու մեջ ևս: Յուխարեստի մեջ հայ առևտրականները հաստատվեցան Բըրցիա հեկեղեցվո շուրջը, գրավելով ամրուց թաղամաս մը, որ ստացավ «Կարտուիր Արմենիսկ» (Հայկական թաղ) անունը: Արդարն, երկու դավանանքի պատկանուլ հայերը, հայ առաքելականները և հայ կաթոլիկները, առաջին անգամ եցր Բուխարեստ եկան, կառուցին «Բըրցիա» կոշված եկեղեցին, որուն մասին պիտի խոսինք ամենի ուշ. այնպես որ, շատ հավանական է, որ նախ քան ներկա եկեղեցվո Հայկական թաղամասը հաստատվելը, անոնք, մեծ մասամբ, հաստատված ըլլան նախ այսօրվա Բըրցիա կոշվող թաղը: Ու միասին կառուցված այդ եկեղեցին հայ կաթոլիկներու թողնեցն ու հայ առաքելականներու հեռանալի վերջն ալ, հայերը և ի մասնավորի հայ կաթոլիկների բնակված պետք է որ ըլլա այդ թաղը, քանի որ տակավին մինչև ժթ. դար Բըրցիայի շուրջ հայ տռեվտրականներ կհիշվեին ու անկի թիւ հեռուներկա «կիսական» փողոցը հայ առևտրականներու կեղրոնն էր:

Պատմաբաններն ումանք ուրիշ հայկական կեդրոն մը կհիշեն, ըսելով, թե Յուխարեստի ուրիշ անկունները՝ Մոդոշայի կամուրջին մոտ, կընակի փարթամ հայերը:

Ժէ. դարու վերջերուն, Յուխարեստին տըրված իշխանական հրովարտական հրովարտական մեջ հայկական Մետրապոլիտարանի կառուցման վայրը ճշտելու առթիվ, կհիշվի նաև Բուխարեստի ներկա մեկ ուրիշ հեռավոր թաղը՝ «Ջուրջյովով» կոշված ճանապարհը «Մտըլպուկ դե պիտիրը ալ Արմենեանուրուց», այսինքն՝ «Հայուն քարե սյունը<sup>1)</sup>», ինչ որ ցուց կրուա, թե 1668—1672 թվականներուն երա տրամադ են վերոհիշյալ հրովարտականները, Յուխարեստի այդ անկունին մեջ ևս հայեր հաստատված էին:

<sup>1)</sup> Ionescu-Gion.-Ist. Bucurescilor. Buc., 1899., p. 9, 270.

